1982 թվականից ՀԽՍՀ-ի լուսավորության նախարարության հատուկ դպրոցների և մանկատների բաժնի ղեկավար Արսեն Մինասյանի ջանքերով, Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների ֆակուլտետում հիմնադրվեց Դեֆեկտոլոգիայի ամբիոնը:

Այս ժամանակաշրջանում հատուկ մանկավարժության և հոգեբանության, լոգոպեդիայի հիմնախնդիրների, առարկայական դասընթացների կազմման և դասավանդման հարցերով Արսեն Մինասյանի ղեկավարությամբ սկսեցին զբաղվել Հովհաննես Աղավելյանը, Նարինե Լութոնյանը, Կիմիկ Սարուխանյանը, Վաչագան Խալաթյանը, Սպարտակ Փալիկյանը, ովքեր ձեռնամուխ լինելով այս գործընթացին պահպանեցին այն մասնագիտական ավանդույթները, որոնց հիմքերը ռուսական հատուկ մանկավարժությունում դրվել էին դեռևս Ֆ.Ա.Ռաուի, Լ.Ս.Վիգոտսկու, Մ.Ս.Պնզների, Ս.Յա. Ռուբինշտեյնի, Մ.Ե.Խվատցևի կողմից: Սկսած այս ժամանակաշրջանից մինչև 1992-1994 թվականները Հովհաննես Աղավելյանը և Նարինե Լութոնյանն, իրենց աշխատանքային և գիտական գործունեությունը Հայաստանում նվիրեցին հատուկ հոգեբանության, լոգոպեդիայի և օլիգոֆրենոմանկավարժության զարգացմանը՝ ստեղծելով գիտահետազոտական մի կայուն դպրոց, որի ավանդույթները պահպանվում են մինչև այժմ:

1993-2000թթ. Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների ֆակուլտետի Դեֆեկտոլոգիայի ամբիոնը ղեկավարեց կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սպարտակ Փալիկյանը, ով հետագա տասը տարիներին ղեկավարեց նաև Նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետը և շնորհիվ իր գիտելիքների և կազմակերպչական ունակությունների մեծ ներդրում ունեցավ ՀՀ-ում՝ Հատուկ կրթության զարգացման հարցում:

30 տարուց ավել՝ 1992 թվականից մինչ օրս, Մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների ֆակուլտետի Դեֆեկտոլոգիայի ամբիոնում, իսկ այնուհետև՝ Նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի Հատուկ մանկավարժության ամբիոնում հատուկ հոգեբանության, լոգոպեդիայի,

էրգոթերապիայի, հատուկ մանկավարժության (օլիգոֆրենոմանկավարժություն, տիպլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն) հիմնախնդիրների զարգացման, գիտական նոր հետազոտությունների իրականացման և առարկայական դասընթացների դասավանդման հարցերով շարունակեցին զբաղվել Գ.Ռ.Հովյանը, ով ՀՀ-ում 1994թ.-ին դարձավ առաջին մասնագետը, ում շնորհվեց մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ Հատուկ մանկավարժություն մասնագիտությամբ, իսկ ներկայումս ղեկավարում է Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը, Զ.Հ.Զոհրաբյանը, ով երկար տարիներ՝ 2001-2011 թվականներին ղեկավարեց Նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի Հատուկ մանկավարժության ամբիոնը՝ իր մասնագիտական գործունեությամբ նպաստելով նոր կրթական ծրագրերի կազմմանն ու մանկավարժական կադրերի պատրաստմանն այս ոլորտում:

Պահպանելով այն գիտական ավանդույթները և գիտահետազոտական ուղղվածությունը, որոնց հիմքը դեռ դրվել էր 1980-ականների սկզբին, իրենց գիտական և աշխատանքային գործունեությամբ՝ սկզբում Նախադպրոցական, սկզբնական և հատուկ կրթության ֆակուլտետի Հատուկ մանկավարժության, իսկ այնուհետև Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում իրենց մասնագիտական գործունեությամբ առանձնացան Ա.Ավագյանը, ով 2012-2017 թթ. հանդիսանալով Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան, լայնածավալ գործունեություն ծավալեց ֆակուլտետի զարգացման և միջազգային կապերի հաստատման հարցում, Ս.Գ.Կարապետյանը, ով 2017-2023 թթ. ղեկավարեց Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը, Լ.Հ. Սարատիկյանը, ով այժմ ոլորտի առաջատար մասնագետներից է և իր գիտամանկավարժական գործունեությամբ հավատարիմ մնաց հատուկ հոգեբանության, այդ թվում նաև օլիգոֆրենոհոգեբանության, լոգոպեդիայի զարգացման հիմնախնդիրներին և սկզբունքներին: Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և

վերականգնողական թերապիայի և Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում դասավանդող մասնագետները՝ Կիմիկ Սարուխանյանը, ով երկար տարիներ՝ 1997-2011թթ. ղեկավարեց Լոգոպեդական ծառայությունների հանրապետական կենտրոնը, Ժաննա Պայլոզյանը, ով 2012-2017 թթ. ղեկավարեց Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնը, Ստեփան Գրիգորյանը՝ բժիշկ-վերականգնողաբան, ով ներկայումս ղեկավարում է Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնը, Անահիտ Դաշյանը, Անահիտ Մանուկյանը, Լուսինե Բաբայանը և Ինեսսա Հարությունյանը, ովքեր ՀՀ-ում հիմք դրեցին սուրդոմանկավարժության գիտական զարգացմանը՝ պահպանելով Վաչագան Խալաթյանի կողմից ստեղծված սուրդոմանկավարժական դպրոցի գիտական ավանդույթները և ձեռնամուխ եղան գիտահետազոտական նոր ուղղությունների զարգացմանն այս ոլորտում:

Անփոխարինելի է տիֆլոմանկավարժ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ազարյանի գիտական գործունեության ծավալումը ՀՀ-ում և, ընդհանրապես, հատուկ կրթության ոլորտում: Նրա ղեկավարությամբ՝ Հատուկ մանկավարժություն մասնագիտությամբ իրենց թեկնածուական գիտական աստիճանն են ստացել շուրջ 25 մասնագետներ, ովքեր ոլորտի առաջատար մասնագետներից են և իրենց գործունեությունն են ծավալում ոչ միայն ՀՀ-ում, այլև՝ արտերկրում. Սուսաննա Մուրադյան, ով ներկայումս «Հատուկ և ներառական կրթության» ֆակուլտետի դեկանի տեղակալն է գիտության և միջազգային համագործակցության հարցերով և հանդիսանում է Կրթական առաջնորդության ծրագրի, Պերկինս Կույրերի միջազգային դպրոցի շրջանավարտ /ԱՄՆ, Բոսթոն/ և զբաղվում է տեսողության և զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխաների /չտեսնող-չլսող/ կրթության, տեսողության խանգարում ունեցող անձանց տարածական կողմնորոշման զարգացման և ներառական կրթության հիմնահարցերով, Ժ.Պայլոզյան, Զ.Զոհրաբյան, Լ.Սարատիկյան, Ս.Կարապետյան, Ա.Ավագյան, Է.Կաֆյան, Թ.Ազատյան, Վ.Մարուքյան, Է.Կաֆյան, Կ.Սարուխանյան,

Ս.Մուրադյան, Ա.Մանուկյան, Ի.Հարությունյան, Ա. Դաշյան, Մ.Հարությունյան, Մ.Մարության, Լ.Բաբայան, Ս.Պողոսյան, Ս.Մուրադյան, Ս.Դավթյան, Ս.Պողոսյան, Հ.Սարգսյան, Ա.Մկրտչյան, Հ.Մկրտչյան, Է.Թադևոսյան և այլք:

Իր անմնացորդ վաստակն ունի ՀՀ-ում «Էրգոթերապիա» մասնագիտության և միջազգային համագործակցության զարգացման հարցերով ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, մանկ. գիտ. թեկ., դոցենտ Մարիաննա Հարությունյանը, ով Հոլանդիայի Ամստերդամի Էրգոթերապիայի Եվրոպական մագիստրական կրթության ակադեմիայի մագիստրոս է, Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի Կրթության ֆակուլտետի Դոկտորանտ, հետազոտող և դասախոս, 2021 թվականից առ այսօր Better Teaching for Better Future Շվեյցարական ծրագրի (Ցյուրիխի մանկավարժական համալսարան, Վրաստանի կրթության նախարարություն, Մոլդովայի կրթության նախարարություն, Հայկական պետական մանկավարժական համալսարան) հայկական կողմի համակարգողն է, ՀՀ «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի բովանդակային մշակումների բաժնի աշխատակիցը, Armenian Journal of Special Education գիտական պարբերականի գլխավոր խմբագիր, ՀՊՄՀ «Համայնքային ներառականության և հաշմանդամության հիմնախնդիրների հետազոտական կենտրոն»- ի տնօրենը: Իսկապես բարձր գնահատականի է արժանի Մ.Հարությունյանի կողմից իրականացված գործունեությունը ՀՊՄՀ-ում՝ գիտության զարգացման և միջազգային համագործակցության կապերի հաստատման հարցերում: